

# ԱՄԱՆՈՐԵԱՅ ՄԵՐ ԽՕՍՔԸ

Posted on December 18, 2013 by Keghart

**keghart.com**

Category: [Opinions](#)



**✖ Խմբագրական, 24 Դեկտեմբեր 2013**

Տարի մը եւս յանձնեցինք պատմութեան եւ ապագային կը նայինք զգուշաւոր լաւատեսութեամբ:

✖ Անցնող շրջանին «Գեղարդ»ի հայկական բաժինը դրուեցաւ աւելի կայուն հիմքերու վրայ եւ շարունակեց իր առաքելութիւնը որպէս անկախ կայքէջ՝ մայրենի լեզուի երկու տարբերակներով իր հայ ընթերցողներուն հասցնելով աննախապաշարեալ յօդուածներ, վերլուծումներ, քննարկումներ, լուսաբանութիւններ, որպէսզի հայ կեանքը յուզող գլխաւոր հարցերու հանդէպ մեր մօտեցումներուն իրազեկ դառնայ հայ ընթերցողը: Մեր հիմնարար մեկնակետը եղաւ ու պիտի շարունակէ մնալ հայ ժողովուրդին գերագոյն շահերը՝ հաւատալով որ չկայ առողջ հասարակութիւն առանց սրտբաց, անաչառ ու թափանցիկ մօտեցման ու ժողովրդավարութեան:

**✖ Խմբագրական, 24 Դեկտեմբեր 2013**

Տարի մը եւս յանձնեցինք պատմութեան եւ ապագային կը նայինք զգուշաւոր լաւատեսութեամբ:

✖ Անցնող շրջանին «Գեղարդ»ի հայկական բաժինը դրուեցաւ աւելի կայուն հիմքերու վրայ եւ շարունակեց իր առաքելութիւնը որպէս անկախ կայքէջ՝ մայրենի լեզուի երկու տարբերակներով իր հայ ընթերցողներուն հասցնելով աննախապաշարեալ յօդուածներ, վերլուծումներ, քննարկումներ, լուսաբանութիւններ, որպէսզի հայ կեանքը յուզող գլխաւոր հարցերու հանդէպ մեր մօտեցումներուն իրազեկ դառնայ հայ ընթերցողը: Մեր հիմնարար մեկնակետը եղաւ ու պիտի շարունակէ մնալ հայ ժողովուրդին գերագոյն շահերը՝ հաւատալով որ չկայ առողջ հասարակութիւն առանց սրտբաց, անաչառ ու թափանցիկ մօտեցման ու ժողովրդավարութեան:

Ճգնաժամի մէջ կը գտնուի հայրենիքը, հայ պետականութիւնը, Հայաստանեայց եկեղեցին, հայկական սփիւռքը, հայկական կազմակերպութիւնները, հայ դպրոցը: Անկախութենէն աւելի քան երկու տասնամեակ ետք տակաւին մութ ամպերը չեն հեռացած մեր ժողովուրդի երկնակամարին վրայէն: «Գեղարդ»ը, որպէս հայ ժողովրդավարական միտքի խօսնակ, ի շարս այլ ազատական ու անկախ մամուլի ներկայացուցիչներու, պիտի շարունակէ ջատագովը հանդիսանալ առողջ քննադատութեան ու կառուցողականութեան, մանաւանդ այս հանգրուանին, երբ հայրենիքի թէ սփիւռքի տարածքին երիտասարդ սերունդ մը յանձնառու դարձած է իր հունին մէջ դնելու մեր խախտած ընկերային, հասարակական ու քաղաքական կեանքի ընթացքը:

Ժխտական բազում երեւոյթներու կողքին սերունդ մը մէջտեղ եկած է բարեշրջելու մեր ներքին թէ արտաքին խոհանոցը: Քաջալերական կը գտնենք այն երեւոյթը, որ քանի մը տասնամեակէ ի վեր եւրոպա հաստատուած հայեր, մանաւանդ երիտասարդներ, գործի լծուած են եւ խոստմաւից միջոցառումներով թարմ շունչ կը բերեն հայ դատի հետապնդման երկար ու բարդ գործընթացին մէջ:

Մենք կը հաւատանք թէ, եթէ ազգ մը չի փափաքիր ծունկի գալ եւ ատամներով կը պայքարի այս արեւուն տակ իր արդար տեղը ունենալու, ոչ մէկ ոյժ կրնայ զգետնել զինք:

Ուրեմն թող Ամանորը թարմ լիցք եւ ուժականութիւն հաղորդէ մեր բոլոր առաջամարտիկներուն,  
որպէսզի անոնք իրենց մաքուր ու զուլալ ակնադիւրներուն ջուրերը հոսեցնեն հայ կեանքէն ներս:

Շնորհաւոր Ամանոր եւ Սուրբ Ծնունդ:

